ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1825-Ա/2 «14» սեպտեմբերի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ («ԳԵՐՄԱՆԵՐԵՆ») ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-րդ դասարանի «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի երրորդ օտար լեզվի առարկայական ծրագիրը («Գերմաներեն»)՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

9/14/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2023 թվականի սեպտեմբերի 14-ի
N 1825-Ա/2 հրամանի

ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

(շաբաթական 1,5-2 ժամ)

Նախաբան

Երրորդ օտար լեզվի չափորոշչի և ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել Հանրակրթության պետական նոր չափորոշչի (ՀՊՉ) և «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի չափորոշիչն ու ծրագրերը:

Երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակներն են՝ Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (ԼԻԵՇ) **A1** և **A2** մակադակներին համապատասխան հաղորդակցվելու հմտությունների զարգացումը, այլ մշակույթների ճանաչումը, սովորողների մտահորիզոնի ընդլայնումը, նրանց տրամաբանական, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը:

Ուսուցման և ուսումնառության բովանդակության հիմքում ընկած են մի քանի կարևոր դրույթներ, մասնավորապես՝

1. օտար լեզուն առաջնայնորեն հաղորդակցության միջոց է,
2. օտար լեզուն ուսումնառության և ճանաչողական կարողությունների զարգացման միջոց է,

3. օտար լեզվով հաղորդակցումը աշխարհճանաչման, ինքնաճանաչման և այլ մշակույթների ճանաչման հիմնական միջոցն է:

Երրորդ օտար լեզվի ուսուցումը սկսվում է 5-րդ դասարանից նախաայբբենական շրջանով: Նախաայբբենական շրջանը կառուցվում է բանավոր խոսքի հիման վրա: Բանավոր դասընթացը կարող է ուղեկցվել այբուբենի տառերի պատկերների ծանոթացմամբ:

Նախաայբբենական շրջանը կարող է ներառել բանավոր խոսքի ձևավորմանը նպաստող կարճ երկխոսություններ, բանաստեղծություններ, երգեր, խաղեր, պաստառներ, համապատասխան տեսալսողական միջոցներ և այլն:

Այս փուլի հիմնական նպատակը հետաքրքրությունների ձևավորելն է երրորդ օտար լեզվի ոսումնառության նկատմամբ: Այդ տարիքի սովորողներն արդեն ունեն որոշակի հաղորդակցական հմտություններ, որոնք թույլ են տալիս շփվել միմյանց հետ նոր օտար լեզվով: Բանավոր դասընթացին հաջորդում է հիմնական մասը: Ելնելով թեմատիկայի և այն ուսումնասիրելու համար անհրաժեշտ լեզվանյութի փոխկապվածությունից և փոխպայմանավորումից՝ թեմատիկ շրջանակն ընտրվել է հաշվի առնելով Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (ԼԻԵՇ) **A1** և **A2** մակարդակների համար նախատեսված թեմատիկան և Հանրակրթության պետական նոր չափորոշչով հիմնական դպրոցի կրթական աստիճանի համար սահմանված վերջնարդյունքները:

Սույն ծրագիրը նախատեսված է հանրակրթական դպրոցների կողմից ընտրված երրորդ օտար լեզվի (գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն) ուսուցման համար: Այլ լեզու ընտրելու դեպքում հիմք են հանդիսանում ծրագրում նշված թեմատիկան, նպատակներն ու վերջարդյունքները, որոնք կարող են տեղայնացվել՝ կիրառելով համապատասխան քերականություն և բառապաշար:

Վերջանարդյունքներին հասնելու համար ուսումնական նյութերի ընտրությունը թողնվում է ուսուցչին. դրանք կարող են լինել ինչպես գործող դասագրքերը, այնպես էլ **A1** և **A2** մակարդակներին համապատասխան այլ ձեռնարկները և առցանց տարբեր նյութեր:

Ծրագրում ներկայացված միջառարկայական կապեր բաժնում նշված տարբեր առարկաներից ուսուցիչը ընտրում է այն առարկան, որն առավելագույնս խաչվում է օրվա դասի թեմայի հետ:

Երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակները

Հիմնական դպրոցում երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակն է՝

1. ԼԻԵՇ-ի **A1, A2** մակարդակներին համապատասխան հաղորդակցական կարողությունների զարգացումը,
2. կրթական տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիքի (բառապաշար, քերականություն, ուղղագրություն, արտասանություն) զարգացումը,
3. սովորողների մոտ այլ լեզուների և մշակույթների հանդեպ հետաքրքրության սերմանումը:

Երրորդ օտար լեզվի ուսուցման վերջնարդյունքները.

Հաղորդակցություն

1. Լսել և հասկանալ իրեն ծանոթ առօրյա թեմաներով հնչող պարզ, հստակ և դանդաղ խոսքը:
2. Կարդալ և հասկանալ իրեն ծանոթ առօրյա թեմաներով պարզ տեքստի հաղորդած տեղեկությունները և հիմնական բովանդակությունը:
3. Համառոտ նկարագրել իրեն, իր շրջապատը, իր առօրյան:
4. Շարադրել պարզ համառոտ տեքստ իր, իր շրջապատի, առօրյայի մասին:
5. Սկսել երկխոսություն իրեն ծանոթ թեմայով՝ արձագանքելով իրեն ուղղված հարցերին: Արտահայտել համաձայնություն կամ անհամաձայնություն՝ տալով պարզ պատասխաններ կամ խնդրելով հստակեցումներ:
6. Կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք (քերականություն, բառապաշար):

1. Մշակութային վերջնարդյունքներ

Արժեքներ

1. Ճանաչել համաշխարհային մշակութային բազմազանությունը, ժառանգությունը և

արժեքները:

2. Գիտակցել բազմալեզու կրթության դերը՝ որպես գլոբալ աշխատաշուկայում հաջողության գրավական:

3. Կարևորել համակեցության նախապայման հանդիսացող արժեքները (ընկերասիրություն, հարգանք, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և այլն):

Վերաբերմունք

1. Ցուցաբերել հարգալից, հոգատար և պատասխանատու վերաբերմունք այլ ազգությունների, նրանց մշակույթների նկատմամբ:
2. Ցուցաբերել հետաքրքրություն այլ երկրների և մշակույթների ճանաչման նկատմամբ:

Նորմեր, կանոններ

1. Իմանալ լեզվակիր երկրի մշակութային առանձնահատկությունները:
2. Ճանաչել մշակույթով/ժամանակով պայմանավորված կենցաղի մի շարք նորմեր (հագուստ, սնունդ և այլն):
3. Ճանաչել ուսումնասիրվող լեզվով հաղորդակցության նորմերը և պահպանել դրանք այդ լեզվով հաղորդակցվելիս:

Հետաքրքրություններ/Նախասիրություններ

1. Դրսևորել հետաքրքրություն ուսումասիրվող լեզվի երկրների մշակութային արժեքների հանդեպ:
2. Ճանաչել ուսումնասիրվող լեզվի երկրի հասակակցի հետաքրքրություններն ու նախասիրությունները:

2. Քննական և ստեղծարար միտք

Միտք

1. Ձևակերպել կապակցված միտք արտահայտող պարզ խոսք:

2. Բերել պարզ հիմնավորումներ:

3. Ընտրել, ստեղծել և կիրառել մտքերն արդյունավետ կերպով ներկայացնող տեսողական միջոցներ:

Տրամաբանական կապեր

1. Դասավորել մտքերը միմյանց հետ փոխկապակցվածությամբ (ընդհանուր/մասնավոր, պատճառ/հետևանք)՝ ճիշտ լեզվական միջոցների կիրառմամբ:

Վերլուծություն

1. Դասակարգել թեմայի շուրջ ստացված տեղեկությունները:

2. Նշել ազգային և համաշխարհային մշակույթների նմանություններն ու տարբերությունները:

Առաջընթաց

1. Արձագանքել ուսուցչի պարզ հրահանգներին:

2. Բերել պարզ հիմնավորումներ, մտքեր և մեկնաբանել դրանք:

1. Ո՞վ եմ ես, ազգություններ, իմ ազգությունը
2. Իմ ընկերները, դպրոցում
3. Ընտանիք
4. Կենդանիներ
5. Ուտելիք, խմիչք, գնումներ
6. Տարվա եղանակ, արձակուրդներ

Բանավոր ներածական մաս
Հիմնական նպատակը
1. **Ներմուծել** առօրյա շփումներում ծանոթության, ողջույնի և հրաժեշտի տարրական արտահայտություններ: 2. **Ծանոթացնել** աշակերտներին ուսուցչի՝ օտար լեզվով հնչող պարզ խոսքին ու հրահանգներին: 3. **Զարգացնել** ծանոթության, ողջույնի և հրաժեշտի տարրական արտահայտությունները համատեքստում կիրառելու հմտություն: 4. **Ներմուծել** պարզ բառապաշար՝ փոքրիկ երկխոսությունների, խոսքային պարզ կառույցների, ոտանավորների, երգերի և այլնի միջոցով:
ԹԵՄԱ 1
Ո՞վ եմ ես, ազգություններ, իմ ազգությունը
Հիմնական նպատակը
1. **Ներմուծել** ոչ ավելի քան 10 տառ: 2. **Ներմուծել** և զարգացնել իրեն ներկայացնող պարզ բառեր, արտահայտություններ: 3. **Ներմուծել** մի շարք երկրների, քաղաքների, համապատասխան ազգությունների և լեզուների անվանումները: 4. Ծանոթացնել վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին: 5. **Ներմուծել** և **ամրապնդել** թեմային համապատասխան քերականական նյութը:
Վերջնարդյունքներ

<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝***
1. որոշ երկրների, ազգությունների, լեզուների, քաղաքների (ուսումնասիրվող լեզվի երկրի/ների մայրաքաղաքների) անվանումները, 2. պարզ նախադասությունների կազմությունը՝ ըստ նմուշ-օրինակի, 3. թեմային համապատասխան պարզագույն քերականական նյութը:	1. լսել և հասկանալ «Ազգություններ» թեմայով պարզ և կարճ մենախոսության, երկխոսության (ձայնագրություն, տեսահոլովակ) ընդհանուր բովանդակությունը, 2. պարզ բառերով և կարճ նախադասություններով ներկայանալ՝ նշելով իր ազգությունը, բնակության վայրը և մայրենի լեզուն, 3. գրել բառեր ուսուցանված տառերով, 4. տալ ազգությանը, բնակության վայրին վերաբերվող պարզ հարցեր և պատասխանել իրեն ուղղված պարզ հարցերին /երկխոսություն/, **5. դրսևորել հարգալից վերաբերմունք աշխարհի այլ երկրների, ազգությունների, լեզուների հանդեպ և ցուցաբերել դրանք ուսումասիրելու հետաքրքրություն:**
Բովանդակություն	
1. Ազգություններ, երկրներ, լեզուներ 2. Որտեղի՞ց եմ ես	
Առաջարկվող գործունեության ձևեր 1. Տեսահոլովակի դիտում/քննարկում: 2. Պաստառ «Իմ հայրենիքը», ուսումնասիրվող լեզուների երկիր/երկրներ, ազգություններ, լեզուներ, հարևան երկրներ: 3. Դերախաղ: 4. Տառային քարտերով խաղ: 5. Ազգության վերաբերյալ փոքրիկ բանաստեղծություններ, խաղեր, երգեր, տեսահոլովակներ:	
Միջառարկայական կապեր	
Մայրենի: Դիտել տեսանյութ տարբեր ազգություններին պատկանող երեխաների մասին և	

գտնել նմանություններ և տարբերություններ իր և նրանց մշակույթների միջև: **Կերպարվեստ:** Պատկերել տարբեր ազգություններին պատկանող դրոշներ: **Տեխնոլոգիա:** Պատրաստել որևէ ազգության ավանդական ուտելիք:

ԹԵՄԱ 2	
Ես և իմ ընկերները, դպրոցում	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** ուսուցանվող լեզվի տառեր (ոչ ավելի քան 10): 2. **Ներմուծել** և **ամրապնդել** ընկերներին, ընկերությանը, ծանոթությանը, դպրոցին, դպրոցական առօրյան ներկայացնող թեմատիկ բառապաշարը: **3. Ներմուծել** և **ամրապնդել** իրեն, իր ընկերներին ներկայացնող շատ պարզ և կարճ արտահայտություններ: 4. **Ծանոթացնել** վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին: 5. **Ներմուծել** և **ամրապնդել** թեմային համապատասխան պարզագույն քերականական նյութը: **6. Ձևավորել վերաբերմունք ընկերության ու ընկերասիրության կարևորության հանդեպ:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. ուսուցանված տառերի գրությունը, դրանց հնչյունային արտաբերման տարբերակները/օրինաչափությունները 2. անհրաժեշտ նվազագույն թեմատիկ բառապաշարը, 3. թեմային համապատասխան պարզագույն քերականական նյութը:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. հասկանալ ծանոթության, ընկերների, դպրոցի, դպրոցական առօրյայի մասին հնչող պարզ և կարճ խոսքը, 2. կարդալ և հասկանալ պարզ արտահայտություններով ու նախադասություններով կազմված կարճ տեքստեր՝

	ընկերության/ընկերասիրության, ծանոթության, դպրոցի, դպրոցական առօրյայի մասին, 3. պարզ բառերով և կարճ նախադասություններով տեղեկություններ հաղորդել իր, իր դասընկերոջ կամ բակի ընկերոջ մասին, 4. գրել ուսուցանված տառերով բառեր և արտահայտություններ, 5. պարզ հարցերի և պատասխանների միջոցով ծանոթություն հաստատել, **6. արժևորել ընկերությունը ու ընկերասիրությունը:**

Բովանդակություն

1. Իմ դասընկերները
2. Մեր դպրոցը
3. Իմ դպրոցական առօրյան

Առաջարկվող գործունեության ձևեր

1. Դերախաղ (ծանոթություն բակում, գրադարանում/միջանցքում), դպրոցում:
2. Աշխատանք նկարներով և քարտերով:
3. Դերախաղ՝ «Իմ դպրոցական առօրյան»:
4. «Իմ դպրոցական առօրյան»:

Թեմայով փոքրիկ բանաստեղծություններ, խաղեր, երգեր, տեսահոլովակներ:

Միջառարկայական կապեր

Մայրենի: Դիտել ֆիլմ ընկերասիրության վերաբերյալ և քննարկել այն,
Նկարագրել դպրոցական առօրյան:
Երաժշտություն: Ունկնդրել և երգել ընկերասիրության վերաբերյալ երգեր:
Կերպարվեստ: Պատկերել իր ընկերոջը:
Տեխնոլոգիա: Պատրաստել դպրոցական պարագաներ:

<table>
<tr><th colspan="2">ԹԵՄԱ 3</th></tr>
<tr><td colspan="2">Ընտանիք</td></tr>
<tr><th colspan="2">Հիմնական նպատակը</th></tr>
<tr><td colspan="2">1. Ներմուծել ուսուցանվող լեզվի տառեր (ոչ ավելի քան 10),
2. Ներմուծել ընտանիքի անդամները անվանող բառապաշար, պարզ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ կառույցներ, համապատասխան քերականական պարզ նյութ:
3. Ծանոթացնել վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին:
4. Զարգացնել շատ պարզ լեզվական միջոցներով ընտանիքը և առօրյան ներկայացնելու հմտություններ:
5. Խթանել ընտանիքի անդամների նկատմամբ հոգատար և հարգալից վերաբերմունք:</td></tr>
<tr><th colspan="2">Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td><u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

1. ուսուցանված տառերի գրությունը, դրանց հնչյունային արտաբերման տարբերակները/օրինաչափությունները,
2. ընտանիքի անդամների անվանումները, ընտանեական առօրյան նկարագրող բառեր և արտահայտություններ,
3. թեմային համապատասխան պարզ քերականական նյութը:</td><td><u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝

1. հասկանալ ընտանիք թեմայով հնչող շատ պարզ և կարճ խոսքը,
2. կարդալ պարզ տառակապակցություններ, բառեր և պարզ նախադասություններ,
3. ներկայացնել իր ընտանիքի անդամներին շատ պարզ նախադասություններով,
4. գրել ուսուցանված տառերը, ընտանիքի անդամների անվանումները,
5. ընտանիք և ընտանեկան առօրյա թեմայով տալ շատ պարզ հարցեր և պատասխանել իրեն ուղղված հարցերին,
6. դրսևորել հոգատար և հարգալից վերաբերմունք ընտանիքի</td></tr>
</table>

	անդամների նկատմամբ:

Բովանդակություն

7. Ընտանիքի անդամներ
8. Մեր ընտանիքի առօրյան

Առաջարկվող գործունեության ձևեր

1. Երկխոսություն:
2. «Իմ ընտանիքը» պաստառի պատրաստում:
3. Աշխատանք նկարով (պատմել, նկարագրել և այլն):
4. Ընտանեկան առօրյայի մասին փոքրիկ բանաստեղծություններ, խաղեր, երգեր, տեսահոլովակներ:

Միջառարկայական կապեր

Մայրենի: Ներկայացնել իր և ընկերների առօրյան՝ գտնելով նմանություններ ու տարբերություններ:
Կերպարվեստ: Պատկերել իր ընտանիքը կամ ընտանիքի անդամներից որևէ մեկին:
Երաժշտություն: Ունկնդրել և երգել ընտանիքի վերաբերյալ երգեր:
Ես և շրջակա աշխարհը: Խոսել իր և ընտանիքի անդամների առողջության պահպանման կարևորության մասին:

ԹԵՄԱ 4

Կենդանիներ

Հիմնական նպատակը

1. **Ներմուծել** կենդանիների անվանումները և նրանց բնութագրող բառապաշար:
2. **Զարգացնել** պարզ արտահայտություններով ընտանի և վայրի կենդանիներին բնութագրելու հմտություն:
3. **Ներմուծել** թեման նկարագրող պարզ և կարճ արտահայտություններ:
4. **Ներմուծել** և **ամրապնդել** թեմային համապատասխան քերականական պարզ նյութը:
5. **Ձևավորել հոգատար վերաբերմունք կենդանիների հանդեպ:**

Վերջնարդյունքներ

<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. ընտանի և վայրի կենդանիների անվանումները, նրանց հատկանիշները բնորոշող բառապաշարը, 2. թեմային համապատասխան պարզ քերականական նյութը:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ ընտանի և վայրի կենդանիներին վերաբերող շատ պարզ հոլովակի հիմնական բովանդակությունը, 2. ընթերցել և հասկանալ ընտանի և վայրի կենդանիներին վերաբերող շատ պարզ և կարճ տեքստերի բովանդակությունը, 3. գրավոր նկարագրել իր սիրած կենդանուն՝ գործածելով շատ պարզ նախադասություններ, 4. շատ պարզ հարցեր տալ կենդանիների մասին և պատասխանել դրանց, **5. դրսևորել խնամք և հոգատար վերաբերմունք կենդանիների հանդեպ:**
Բովանդակություն	
1. Ընտանի կենդանիներ 2. Վայրի կենդանիներ 3. Իմ սիրելի կենդանին	
Առաջարկվող գործունեության ձևեր 1. Աշխատանք նկարներով և քարտերով: 2. Պաստառ՝ «Իմ սիրելի կենդանին», «Իմ սիրած կենդանին», պաստառի ներկայացում: 3. Մուլտֆիլմի/տեսահոլովակի դիտում: 4. Երգ, բանաստեղծություն, հանելուկ, երկխոսություն:	
Միջառարկայական կապեր	
Մայրենի: Գրել կարճ շարադրանք սիրելի կենդանու/կենդանիների վերաբերյալ: **Ես և շրջակա աշխարհը:** Դիտել տեսանյութ կենդանիների հանդեպ հոգատար վերաբերմունք ցուցաբերելու վերաբերյալ և քննարկել այն: **Կերպարվեստ:** Պատկերել սիրելի կենդանուն:	

Երաժշտություն: Լսել և երգել կենդանիների մասին երգ:

Թեմա 5	
Ուտելիք, խմիչք, գնումներ	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** սննդամթերքի անվանումներ, սպասքի պարագաները ներառող, ինչպես նաև սննդամթերքի, հագուստի և խանութների տեսակներին առնչվող բառապաշար: 2. **Ներմուծել և ամրապնդել** թեմային համապատասխան քերականական պարզ նյութը: 3. **Ներմուծել** սնվելու ժամերը նկարագրող պարզ և կարճ արտահայտություններ: **4. Շեշտադրել առողջ սննդին հետևելու կարևորությունը:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. սննդամթերքի տեսակները, սպասքի պարագաները անվանող բառապաշարը, 2. իր նախաճաշը/ճաշը/ ընթրիքը ներկայացնելու պարզ նախադասություններ, 3. առողջ և ճիշտ սնվելու ռեժիմը, 4. թեմային առնչվող քերականական պարզ նյութ, 5. խանութում գնումներ կատարելու քաղաքավարության պարզ ձևերը և արտահայտությունները (խնդրել որևէ սննդամթերք, հագուստ, հարցնել գինը, վճարման ձևը):	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ սննդամթերքի տեսակների և գնումների մասին պարզ խոսքը 2. ընթերցել և հասկանալ կարճ, պարզ տեքստեր առողջ սննդի, ճիշտ սնվելու սպասքի պարագաների և գնումների մասին 3. շատ կարճ և պարզ նախադասություններով նկարագրել իր սիրած ուտելիքը/ըմպելիքը, ասել իր նախընտրած հագուստի տեսակը, գույնը 4. կազմել գրավոր տեքստ իր սնվելու

	ռեժիմի և գնումների վերաբերյալ՝ գործածելով շատ պարզ արտահայտությունների և կառույցներ 5. պատասխանել սնվելու ռեժիմի և գնումների մասին պարզ հարցերին և փոխադարձ հարցեր ուղղել զրուցակցին **6. Կարևորել առողջ սնունդը և ճիշտ սնվելու ռեժիմը:**

Բովանդակություն

1. Սննդամթերք
2. Սպասքի պարագաներ
3. Իմ նախաճաշը/ճաշը/ընթրիքը
4. Խանութում
5. Հագուստ, կոշիկ գնելիս

Առաջարկվող գործունեության ձևեր

1. Աշխատանք քարտերով և նկարներով:
2. Խմբային աշխատանք «Ճաշացանկի պատրաստում»:
3. Մուլտֆիլմի/տեսահոլովակի դիտում:
4. Երգ/Բանաստեղծություն:
5. Երկխոսություն:
6. Հանելուկ:
7. Դերախաղ:

Միջառարկայական կապեր

Մայրենի – Գրել բանջարեղենային/մրգային աղցանի բաղադրատոմս: Դիտել տեսանյութ գնումներ կատարելիս:
Ես և շրջակա աշխարհը – Բացատրել առողջ սննդակարգի կարևորությունը:
Կերպարվեստ – Պատկերել սննդի և գնումների ցուցակ:
Տեխնոլոգիա – Պատրաստել սրճարանի կամ ռեստորանի մենյու:
Մաթեմատիկա – Հաշվարկել օրվա գնումների ծախսը:

Թեմա 6	
Տարվա եղանակ, օրվա եղանակ, արձակուրդներ	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** տարվա եղանակների և օրվա եղանակին, ինչպես նաև արձակուրդին առնչվող բառապաշար և թեմային համապատասխան պարզ քերականություն: 2. **Ձևավորել** օրվա եղանակի, արձակուրդի վերաբերյալ բանավոր տեղեկատվության ընկալման հմտությունները: 3. **Զարգացնել** օրվա եղանակի և արձակուրդի մասին տեղեկատվություն փոխանակելու կարողություններ: **4. Ձևավորել տարվա և օրվա եղանակին համապատասխան հագուստ կրելու կարևորության գիտակցություն:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. թեմային բնորոշ բառապաշարը, 2. թեմային համապատասխան պարզ քերականական նյութը: 3. շաբաթվա օրերը, տարվա տասներկու ամիսները, 4. տարվա 4 եղանակները, արձակուրդները:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ օրվա եղանակի, արձակուրդների մասին տեղեկատվությունը 2. շատ կարճ նախադասություններով նկարագրել տարվա և օրվա եղանակը կամ արձակուրդը 3. պարզ նախադասություններով գրել տեքստ իր նախընտրած եղանակի կամ արձակուրդի մասին 4. շատ կարճ նախադասություններով զրուցել տարվա եղանակների կամ

	արձակուրդի մասին, 5. պարզ նախադասություններով վարել շատ կարճ երկխոսություն իր և իր ընկերների արձակուրդների վերաբերյալ:

Բովանդակություն

1. Տարվա չորս եղանակները
2. Իմ սիրելի եղանակը
3. Բնության երևույթները
4. Արձակուրդներ

Առաջարկվող գործունեության ձևեր

1. Պաստառ-տարվա չորս եղանակները:
2. Այց պատկերասրահ՝ քննարկում:
3. Համապատասխան եղանակի պատկերում դասական երաժշտության ներքո (Վիվալդիի Տարվա 4 եղանակները, Չայկովսկի):
4. Պաստառ:
5. Երգ:
6. Տեսանյութ արձակուրդ թեմայով

Միջառարկայական կապեր

Մայրենի – Նկարագրել տարվա եղանակները, օրվա եղանակը:
Գրել նամակ ընկերոջը՝ պատմելով իր անմոռանալի արձակուրդների մասին:

Կերպարվեստ – Պատկերել տարվա յուրաքանչյուր եղանակին համապատասխան հագուստ: Պատկերել իր ամառային/ձմեռային արձակուրդները:
Երգ – Լսել և երգել տարվա եղանակների մասին երգ:
Ես և շրջակա աշխարհ – Դիտել ուսուցողական տեսանյութ տարվա և օրվա եղանակների մասին և քննարկել դրանց համապատասխան հագնվելու կարևորությունը:

Das Programm ist nach dem DACHL – Prinzip entwickelt
Grammatik wird nicht isoliert von der sprachlichen Anwendung unterrichtet, sondern stets in ihrem Kontext.

Դասարան	**Թեմաներ**	**Հնչյունաբանություն**	**Քերականություն**
5-րդ դասարան	Նախաայբբենական շրջան 1. Ո՞վ եմ ես, ազգություններ, իմ ազգությունը 2. Իմ ընկերները, դպրոցում 3. Ընտանիք 4. Կենդանիներ 5. Ուտելիք, խմիչք, գնումներ 6. Տարվա եղանակ, արձակուրդներ	Das Alphabet (A - Z), Buchstaben-verbindungen, Diphthonge	**Personalpronomen:** *ich, du, er/sie/es, wir, ihr, sie /Sie* **Possessivpronomen:** *mein(e), dein(e)*, *sein(e) ihr(e), unser(e), euer/ eure, ihr(e)/Ihr(e)* **Aussagesätze** W-Fragen Ja/Nein Fragen **Verbkonjugation:** *ich, du, er/sie/es*, *wir, ihr, sie/Sie* **Bestimmter Artikel:** *der, die, das /die Pl./* **Unbestimmter Artikel:** *ein, eine, ein* **Negativpronomen im Nominativ:** *kein, keine, kein* **Verneinung mit *nicht*** **Präsens:** regelmäßige Verben auf- *s-z-ß-t-d* **Konjunktionen**: *und, auch*, *aber, oder* **Genitiv-s bei Eigennamen** **Die Präposition: *von***(*Zugehörigkeit)* **Ortsangaben:** *in, aus* **Adjektive:** *Positiv* **Präsens:** *unregelmäßige Verben* Verben: *sein, haben* **Wortstellung** Deklination mit Akkusativ **Modalverben:** *können, mögen(möchte)*

			Das Adverb: *dann* **Die Zeitangabe:** *am* **Adverbien:** *immer, oft* Ordinalzahlen

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2021թ.
2. Հանրակրթական ընդհանուր ծրագրի «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» բնագավառի 2-12-րդ դասարանների չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2021թ.
3. Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment, Cambridge University Press, Modern Languages Division, Council of Europe, Strasbourg, 2001. Available at https://rm.coe.int/1680459f97